ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ԹԻՎ 1

2022 թվականի սեպտեմբերի 13-ին տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 6-րդ բ դասարանի ծնողական ժողովը:

Ժողովին ներկա էին բոլոր ծնողները, դասղեկ Գոհար Ղազարյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1.2022-2023 ուստարվա խնդիրներն ու անելիքները (դասագրքերի վարձավճարներ, դրանց հավաքագրում ու հանձնում, կարգապահություն, ռեժիմ, հերթապահություն, հաճախումներ և այլն):
2. Դասարանի ծնողխորհրդի անդամների և նախագահի ընտրություն:
3. Ծնողազուրկ և անապահով երեխաներին օգնություն ցույց տալու հարցը:
4. Ընթացիկ հարցեր (թեմատիկ ու աշխատանքային տետրեր, օրագրեր, գրենական պիտույքներ, սպորտային հագուստ և այլն):

1. Լսեցին.- 2022-2023 ուստարվա խնդիրներն ու անելիքները (դասագրքերի վարձավճարներ, դրանց հավաքագրում ու հանձնում, կարգապահություն, ռեժիմ, հերթապահություն, հաճախումներ և այլն):

Դասղեկ Գոհար Ղազարյանի ելույթը, որը ներկայացրեց 2021-2022 ուստարում 5-րդ բ դասարանի կատարած աշխատանքները ու խոսեց նոր՝ 2022-2023 ուստարվա 6-րդ բ դասարանի խնդիրների ու անելիքների մասին:

Անցած ուստարում դասարանի 33 աշակերտներից 3-ը եղել են գերազանցիկներ, 6-ը՝ հարվածային: Բացակայության պատճառով Բուլղադարյան Մարիամ ու Հակոբյան Գեղեցիկ քույրերը մնացել են նույն դասարանում: Նոր ուստարում դասարանում կա նորեկ աշակերտ՝ Դավթյան Միլենան:

Տեղեկացվեց, որ դասերն սկսվում են ժամը 9:00-ին և ավարտվում են 15:00-ին:

Սեպտեմբերի 1-ին բաժանվել են դասագրքերը, և բոլոր աշակերտներն էլ ապահովված են դասագրքերով: Նախորդ ծնողկոմիտեի նախագահը հավաքել և գրադարանավարուհուն է մուծել վարձավճարները:

Կազմվել է աշակերտական հերթապահության ցուցակ, և ամեն օր կատարվում է հաճախումների հաշվառում:

Դասղեկի առաջարկությամբ ու ծնողների համաձայնությամբ կազմվեց դասարանում կատարվող աշխատանքների ու միջոցառումների ծրագիր՝ նշելով կատարման ժամկետները:

Որոշեցին.

Կազմել նոր ուստարվա աշխատանքների ու միջոցառումների ծրագիր՝ նշելով կատարման ժամկետները, տարվա ընթացքում հաճախակի կազմա-

կերպել էքսկուրսիաներ՝ պատմական ու մշակութային վայրեր, այցելություններ կինո-թատրոններ, կազմակերպել հետաքրքիր ու բովանդակալից մրցումներ:

2.Լսեցին.- Դասարանի ծնողխորհրդի անդամների և նախագահի ընտրություն:

6-րդ բ դասարանի ծնողխորհրդի անդամների և նախագահի ընտրության հարցը: Առաջարկվեց նոր ուսումնական տարվա համար ձևավորել 6-րդ բ դասարանի ծնողական խորհուրդ՝ հետևյալ կազմով:

1.Հայրապետյան	Ռուզաննա	Ժիրայրի
2.Կարապետյան	Արմինե	Խաչիկի
3. Հովհաննիսյան	Քրիստինե	Միքայելի
4. Հովհաննիսյան	Գոհար	Գառնիկի
5. Պողոսյան	Լիլյա	Առաքելի

Նախագահի թեկնածու առաջադրվեց Քրիստինե Հովհաննիսյանը, որից հետո կատարվեց քվեարկություն: Քվեարկության արդյունքում 5 կողմ, 0 դեմ ձայնով Քրիստինե Հովհաննիսյանն ընտրվեց դասարանի ծնողխորհրդի նախագահ:

Որոշեցին.

6-րդ բ դասարանում ձևավորել ծնողական խորհուրդ հետևյալ կազմով՝

1. Հովհաննիսյան	Քրիստինե	Միքայելի
2. Հայրապետյան	Ռուզաննա	Ժիրայրի
3. Կարապետյան	Արմինե	Խաչիկի
4. Հովհաննիսյան	Գոհար	Գառնիկի
5. Պողոսյան	Լիլյա	Առաքելի

3.Լսեցին. - Ծնողազուրկ և անապահով երեխաներին օգնություն ցույց տալու հարցը:

Նորընտիր նախագահի ելույթը, որն առաջարկեց աջակցություն ցույց տալ ծնողազուրկ և սոցիալապես անապահով երեխաներին՝ դասագրքերի վարձավճարները հավաքագրելու, էքսկուրսիաների և այլ միջոցառումների ժամանակ նրանց հանգիստը կազմակերպելու հարցում:

Որոշեցին.

Աջակցել ծնողազուրկ և սոցիալապես անապահով երեխաներին՝ դասագրքերի վարձավճարների, էքսկուրսիաների և այլ միջոցառումների ժամանակ նրանց հանգիստը կազմակերպելու հարցում:

4. Լսեցին.- Ընթացիկ հարցեր:

Դասղեկը տեղեկացրեց, որ հենց ուսումնական տարվա սկզբից պետք է

լուծել են մի շարք կարևոր հարցեր՝ ուսուցման գործընթացը կազմակերպված և ժամանակին անցկացնելու համար: Բոլոր աշակերտները պիտի ունենան օրագրեր, ապահովված լինեն գրենական պիտույքներով, առարկայական թեմատիկ տետրերով և այլ պարագաներով: Այդ բոլոր աշխատանքները պետք է կատարեն ծնողխորհրդի անդամները՝ նախագահի ու դասղեկի հետ միասին:

Որոշեցին.

Օգնել դասղեկին և ուսուցիչներին՝ ձեռք բերելու անհրաժեշտ տետրեր /աշխատանքային և թեմատիկ/, օրագրեր, կազմակերպված իրականացնել նախատեսված բոլոր աշխատանքները:

Ծնողական խորհրդի նախագահ՝ /Հովհաննիսյան Քրիստինե /

Քարտուղար՝ / Կարապետյան Արմինե/